

ՆՈՐԱՅԱՅՑ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆ ՄԸ ՅԱՄԵՐԻԿԱ

ԺՈՂՈՎԱԾՈՅ ԳՐՈՑՆ ՍՈՂՈՄՈՎՆԻ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ

ՆԻՒՍԱՑԻՈՅ ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ

Արծկե

ԶԿ—1311

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթ՝ 214: Ծաւալ՝ 16.1×11.9×4: Նիւթ՝ Թուղթ: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Պաշպամակ՝ ձեռագրի վերջաւորութեան երկու թերթ, մետրական երկաթազրոյզ դրուած: Պարունակութիւնը Աւետարանէն է (Յովհ. Ժր, 35): Վիճակ՝ բաւարար. նորոգուած է Ժէ Դարուն, իսկ վերակաշմբած՝ աւելի ուշ: Գրութիւն՝ երկսիւն. իսկ Գրիգոր Նիւսացւոյ Երգ Երգոցի Մեկ-նութիւնը՝ միասիւն: Տաղ՝ 17: իսկ Նիւսացւոյ Մեկնութիւնը՝ 18: Գծում՝ ճշնշմամբ: Գիր՝ բոլորգիր. խորագրերը եւ պարբերութեանց սկիզբը գտնուող գրութեան վերջեր կարմիր թանաքով գրուած են: Զարդագրութիւն՝ Թռչնադիր մը, էջ 1ա. էջին վերեւ զարդ, էջ 84ա, 183ա: Գրիչ՝ Յովհաննէս արեղայ. իսկ Նիւսացւոյ Մեկ-նութեան գրիչին ինքնութիւնը անյայտ է: Պատուիրատու՝ չիք: Նորոգող եւ կազմող՝ Տէր Պետրոս քահանայ՝ Եղեւթոյ Ս. Աստ-ւածածին եկեղեցւոյ, նորոգած է ձեռա-դիրս Հայոց ՈՂ (1641) Թուականին: Ժա-մանակ՝ ԶԿ (1311): Տեղի՝ Արծկէ: Սեպիա-կանատեր՝ Արշակ Տայեան ի Դիւրոյնիտ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

էջ 69ր-70ա. — [Ո]վ ընթերցողք, յորժամ ի ձեռս ա[ռ]նուք յաղապար աւգտութեան, յիշեսցիք յաղաւթս:

էջ 83ր. — Ով եղբարք, աղաչեմ զձեզ, որ

զ[ի]ծ, ողորմին ասէք զծողի սուտունուն ա-րեղայ[ի] Յովհաննէսի:

էջ 111ր-112ա. — Ժողովող ով որ ըն-թերցողք զտառս Ած աշուհչս, եւ ճաշակիք յայտմ յողնահամեան սեղանոյս, եւ զսոյն ընդանիք, եւ զք եղբարքն իմ, զՍուգիտան եւ զԱնդրէասն, յիշեսցիք յաղաւթս ձեր, եւ զանպիտան եւ զսուտանուն զծողս Յովհան-նէս արեղայ, եւ Ած. զձեզ յիշէ. ամէն:

էջ 126ր-127ա. — Ով եղբարք ընթեր-ցողք Ած աշուհչս զրոցս, աղաչեմ, յիշեսցիք յաղաւթս ձեր զսուտանուն արեղայ զՅովհան-նէս:

էջ 143ր-144ա. — Վա՛յ ինձ, վա՛յ, եւ ե-ղուկ յիմարութեանս, որ չեմ ի հասկանալ զպատուամս իմաստնոյն, որք ընդ մեզ խաւսի զմասն իմաստնոց:

էջ 179ա. — զՄեղապարտ զՅովհաննէս, որ տկար անձամբ զրեցի, յիշեսցիք յա-ղաւթս ձեր:

Գլխաւոր Յիշատակարան

էջ 179ր-181ր. — Ուղղեալ է զարիճեակս յայտ յիշեցանայ(ր)ացւոց եւ յերուսաղէ-մացւոց արեւինէ:

Փառք համապատիւ եւ միասնական սր-բերորդութեանն, Հաւր Այ., ծնաղի Միածնի Որդւոյ, եւ արտաքս առաքողի Հոգւոյն Սրբոյ. Որդւոյ Այ., ծնեալ է Հաւրէ անհառելի էութեամբ, ի վեր քան յրան, նոյն՝ պանծառ գոյ Հոգւոյն րաւ

Հայրն բնութիւնն, Հոգւոյն Այ. րբ լուսման անհատաբար դոյլ ի Հաւրէ, եւ փառակից Որդւոյն Միածնի, ինքեան միայն դիտելի: Որոշեալ ի միմեանց մերոց իմաստից՝ բնութիւնամբ յաւէտ գոն, անըդիւտ դոյլ ի միմեանց, յորում բաժանումն որոշման ոչ է դառնիկ. իսկ ըստ անձնաւորութեան նոցին եւ ըստ դիմաց տարբոյզ դոյլով յերեւոյց, որ եւ Հասարակութիւնն դիմացն ոչ է իմանալ: Զի մի բնութիւն ասել՝ դերիսն դաւանեմք ըստ անձնաւորութեանն դիմաց, եւ դերիսն խոստովանել՝ դիմութիւնն բնութեանն ճշդուն ճանաչեմք: Յամենայն գոյից արարածոց իւրոց յերկնաւորաց անմահական դասուց եւ ի ստոր, եւ կա[մ] մեր]ոցս մարդկան՝ բանական մահականացումս, նոսե յայնց ոմանց, որ տարբոյզ դոյլ ի սոցունց յաւիտեանս. ամ: Գրեցի եւ Հասարակութեան կառուցի աւժանդակութիւն առեալ ի վերին դաւորութենէն ի դէմս քարտենի ըստ իմումս կարութեան զբանս Աստուածայնոյն Սողոմոնի, Ած. ային Հոգւոյ մարդկան, ի թուականութեան Հայկազեան տոգմէս տուածաբն Զվ: Եւ Յոհաննէս առնուն, ի մանկունս եկեղեցւոյ, գրեցի ըստ իմում կարողութեան, եւ կարգեցի ի դէմս քարտենի, ի դաւառիս Բիւրնեանց կոչեցեալ՝ յանուանեալ անապատիս Արծկէռ, սխրալի եւ պայծառ անուամբ չեղացեալ, ընդ Հովանեաւ սբ. եկեղեցւոյս, որ անուամբ յորջորջի սբ. Սիովն, եւ այլ սրբոց եւ սբ. Սքանչելագործի, եւ պայծառանուամբ կենսաբեր սբ. Նշանի. եւ ես՝ Մէլիք Ծահ անուն ըստ աւագանի կոչելոյ, եւ ապա ի ձեռնադրութեան փոխելոյ անուն Յոհաննէս, որ չեմ իսկ արժանի անուան քահանութեան. այլ յուսամ յորդորութիւն Այ. մի թէ Համարի թիւ վարձկանաց իւրոց: Ով որ Հանդիպիք ընթերցող եւ մտաւք ճաշակեալ յայսմ յոյնահամեան սեղանիս, որք է ի կրթութիւն մանկանց Նոր Սիովնի, եւ զսոյն ընդունիք եւ յիշատակի արժանի առնէք աղաւթիւք առ Քս., յոյսն անձին իմոյ. դատաւանլիս զանազան կրիւք ներհակաց Ած. ային կոմաց:

Արդ՝ աղաչեմ, յորժամ ի ձեռս առնուք դատաւ Ած. աշունչս, յիշեալիք զերիս եղբարսն իմ, զՍուգիւսան, եւ զԱնդրէասն, եւ զԾահ Մէլէքն, եւ զՋորյն իմ զՔանդիսաթուն, եւ զԾնաւդն իմ զՂուսիկ զփոխեցեալքն ի Քս., յոյսն ամենեցուն, որ պարգեւատու է: Վարձս բարեաց եւ բազմապատիկս երկնային պարգեւաւք առեցեալս Հատուցէ նոցին՝ ըստ տրոց փոխարինին, արդար դատաւորն Քս., յորժամ դայցէ փոստաւք Հաւր եւ Հոգւոյն Հանգերձ Հրեւտակաւք:

Էջ 182բ. — Սիւնակ ա, առաջին շորս տողերը Լեզանած են:

... Եւ յին[չաւր]ինակէք վաղուց Հետէ [ստ]ուգեալ եւ ճշմարտեալ ի նոյն պայմանի՝ բանիւք եւ բառիւք եւ տառիւ անթիւրի եւ անսղալ զդոյլով. դի թէպէտ եւ յաղապս մերոցս կարեաց ի սոյնս ձեռնարկեցաք, սակայն եւ առաւել եւս վասն աւրինակի, եւ գաղափար ալոց լինելով սա ըստ յարմարութեան բանիցն:

Զի ամ., որ համարձակ զայս առցէ առ ի յայլ առանց երկբայութեան եւ կասկածանաց, եւ զմեզ եւ զԾնողն մեր ի խորոց սրտէ յիշեացէ առ բեր բարեաց տուողն Քս. Յս., որում յաւէտ փափագիմք Հոգւոյն ի տեսութեան, ի Հայր եւ ի սբ. Հոգի նոցին, որ է աւրհնեալ եւ փառաւորեալ ընդ Հաւր եւ սբ. Հոգւոյն յերիս յ...

Յետմագոյն Յիշատակարան

Էջ 182բ. — Վերստին նորոգեցաւ Ած. աշունչ գիրքս ձեռամբն Տէր Պետրոս Քահանային, ի վայելումն Աւետիք զպրին, եւ սա յիշատակ է Տր. Պաղտատար ցանկալի եւ պաղճալի քահանային: Ով որ կարդոյ կամ աւրինակէ, Ած. ողորմի ասէ իւրն եւ իւր նախնեաց, եւ ձեզ ողորմի Տր. մեր Յս. Քս. ի միւս անդամ զալտեանն, ամէն: Հայր մեր, որ յեր:

Կարմեցաւ գիրքս ի թվականին Հայոց Ռ. Ղ. (1641) ի դուռն բարձրահայեաց սբ. Ած. ամենին, ի մայրաքաղաքն Եդեսիս:

/ . / / / : : / : / / / : / / . / / / : :
 / : / . / / / / . / : / . / : / : / :

Ծածկագրութեան վերծանութիւնն է.

Աւետիք Ծառայ Այ. :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ 1ա. — Առակ Սողոմոնի. ծանալ՝
զիմաստութիւն եւ զխրատ :

էջ 24ա. — Առակք Սողոմոնի. Որդի է—
մաստուն ուրախ առնէ զհայր :

էջ 69բ. — Առակք Սողոմոնիան քնինք,
զոր զրեցին բարեկամք եղեկիա արքա Հրէ—
աստանի :

Նիւ Եոթ

էջ 83բ. — Ժողովող. Բան ժողովողի,
որդոց Դաւթի Թագաւորի. Ունայնութիւն
ունայնութեանց ասաց ժողովողն...

էջ 112ա. — Երգ Երգոց Սողոմոնի.
Հարսն ասէ զայս ինչ. Համբուրեացէ զիս է
Համբուրից բերանոյ իւրոյ ... Վերջ՝ էջ
127ա, եւ կամ որթուց եղանց է վերա լի—
րանց խնդարեաց :

էջ 127ա. — Իմաստութիւն Սողոմոնի.
Սիրեցէ՛ք զարդարութիւն ոյք դատիք զեր—
կիր...

էջ 183. — Գրիգորի Նիսացոյ Մեկնու—
թիւն Երգ Երգոցի. Բռն առ. Հարսն ասէ
Համբուրեացէ զիս է Համբուրից բերանոյ
իւրոյ ... Վերջ՝ էջ 214բ. Նոյնպ.
եւ զլսելի վայրապար դարձուցին եւ զայլ :

ԳՐԻԴՈՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ